

րումն է, ներքին մաքառումը, տագնապած հոգու տարփանքը, ցանկանում է այրվել երազած էակի ջերմությամբ:

«Պատանության ծաղիկներ» շարքում ամփոփված են ինը բանաստեղծություն, որոնք վկայում են պատանեկան անմիջական զգացումների բազմազանությունը: Կյանքը պատանու առջև բացում է իր գաղտնիքները:

*Ես կոչիր-կույր էի մինչև այդ կյանքում,
ու բացվել էին աչքերըս արդեն.
Գարնան գիժ քամին, քեզանից թաքուն,
Քո կուրծքն էր բացում ու փակում իմ դեմ:*

Օդում արծարծված գարնանային «տաք ու պաղ» շունչը կրկին խռովել է պոետի հոգին: Իր կանչերում նա արտահայտում է հոգու տվայտանքը: Դիմելով քնարական մտերմուհուն՝ գրում է.

*Սակայն դու իմ կանչը չես լսում.
- Չե՞ս լսում, թե՞ քնքուշ ստում ես...
Ա՛խ, ինչո՞ւ մեծացար այդպես շուտ,
Որ այդպես ո՛ւշ - ո՛ւշ գաս մեր տունը...*

Պոետը հավատարիմ է մնացել իր հոգու ծայրին: Թաքուն սիրո տվայտանքը («Իմ արցունքները թեպետ չեն հոսում») պատանի պոետը բացահայտում է համոզիչ պատկերներով: Կավաշեն մի պատ է բաժանում նրան սիրած էակից, մինչդեռ սրտից սիրտ՝ պարիսպ է ահագին.

Անցել են տարիներ, «հիմա ողջն ասես մի հեքիաթ լինի», - վերհիշում է պոետը: Նրա խռովքի պատճառը չարձագանքված պատանեկան սերն է.

*Շա՛տ ցուր է հոսել, անցել են արդեն տարիներ քանի:
Մեծ քաղաքների մայթերում արդեն ես նույնիսկ հիմա,
Երբ հանդիպում եմ քեզ նման մեկին միշտ շուտ եմ գալիս,
Միշտ ետ եմ դառնում արեւը սիրող այն ծաղկի նման:*

Սերը Սեւակի պոեզիայում ունեցել է անհատական, կենսագրական արտացոլում: Բանաստեղծը երգել է իր իսկ սիրուց ծնված ապրումները, երգել է իր «ես»-ի անունով, սիրելիի առջև անկեղծորեն բացել է հոգին: Ավելի ուշ շրջանում գրած «Նույն հասցեով» շարքում պոետի անհատականությունը կարծես մաքրվում է կենցաղային նկարագրություններից, եւ նա համընդհանուր բովանդակություն է տալիս իր երգերին: «...Ինչը մարդուն հարազատացնում է մարդկությանը, մեկ անհատի քնարական հերոսի ապրածի գրում է գրականագետ Արիստակեսյանը:

Ժամանակակից հայ քնարերգության մեջ մանկության հուշը միանգամայն տարբեր արձագանք է ծնում: Բանաստեղծներից ոմանց համար մանկության հուշը կյանքից հեռանալու երանավետ ափ է, ոմանց համար՝ սփոփելու ժամանց, իսկ Սեւակի համար՝ պոեզիայի զարգացման օրինաչափ ճանապարհ:

Галстян Л. А. - Детская и юношеская лирика Паруйра Севака - Обсуждая тему детства П. Севака, мы анализировали душевную эволюцию поэта и показали переход к большой поэзии.

ՎԱՀԱՆ ՏԵՐՅԱՆԻ ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԵՏՔԵՐՈՎ

(ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ՃՇՏՈՒՄՆԵՐ)

Յու. Գ. Յովհաննիսյան

Ամենից առաջ խոսքը վերաբերում է Վահան Տերյանի «Երկիր Նաիրի» շարքի «Մշուշի միջից,- տեսիլ դյուբական» տողով սկսվող բանաստեղծությանը, որն առաջին անգամ «Երկիր Նաիրի» ընդհանուր խորագրով «Դու հպարտ չես, իմ հայրենիք» եւ «Բարակիրան մահրուհին իմ ժպտաց» բանաստեղծությունների հետ միասին տպագրվել է 1915 թվականին «Մշակ» թերթի հունիսի 7-ի համարում (թիվ 122): Այս բանաստեղծությունը Բաքվի «Նվեր որբերին» թերթին է ուղարկվել շատ վաղուց՝ 1915թ. հունվարի 7-ին, Պետրոգրադից, եւ պետք է տպագրվեր նույն ամսի սկզբներին, բայց ինչ-ինչ պատճառով տպագրվել է տարեվերջին՝ դեկտեմբերի 9-ին, «Քեզ կըմնա միշտ օտար» բանաստեղծության հետ միասին, համարակալված հռոմեական թվանշանով I, II, դարձյալ «Երկիր Նաիրի շարքից» խորագրով:

«Նվեր որբերին» թերթի հրատարակության մախաձեռնությունը պատկանում է Բաքվի «Արեւ»-ի խմբագրության մոտ կանգնած մի խումբ մտավորականների, որոնք որոշում են հրատարակել միօրյա թերթ՝ նվիրված հայ որբերին: Ընտրվում է խմբագրական հատուկ մարմին, որի մեջ մտնում են Սիմոն Յակոբյանը, Դավիթ Անանունը (Տեր-Դանիելյան) եւ ուրիշներ: Սկզբում որոշում են թերթը հրատարակել տեղի մտավորականների ուժերով, բայց «նկատելով, որ սա լինելու է ի նպաստ հայ որբերի, հետեւաբար գործը ընդհանուրի սեփականություն համարելով», աշխատակցելու են հրավիրում «հայ գրագետներին անխտիր»: Իսկ թերթից ստացված ամբողջ գումարը պետք է հատկացվեր հայ որբ գաղթականներին: «Նվեր որբերին» թերթին սիրահոռար կերպով իրենց մասնակցությունն են բերում Վահան Տերյանը, Յովհաննես Յովհաննիսյանը, բժիշկ Լեւոն Աթաբեկյանը, Կարա-Մուրզան եւ ուրիշներ:

Հայտնի է, որ Տերյանն առաջին անգամ չէ առանց դրամական վարձատրության, այսպես ասած, բարեգործական նպատակով աշխատակցում հայկական մամուլին: Հիշենք, թե ինչպես դեռ 1909 թվականին «Հացի կտոր գեթունցուն» գրական ժողովածուում, որը հրատարակվել է Նոր Նախիջեւանում, Գրիգոր Չալխուշյանի խմբագրությամբ «ի նպաստ սովյալ գեթունցիների», Տերյանը «Ոսկի հեքիաթ» գրքից» խորագրի տակ տպագրել է երեք բանաստեղծություն՝ «Մեղմիվ փոկեց քնքուշ մութ» (էջ 121), «Չըգիտեմ՝ այս տխուր աշխարհում» (էջ 122) եւ «Դու չբացել ես» (էջ 123): Իսկ 1915-ին «Չիթենի» գրական ժողովածուում, որը հրատարակվել է Թիֆլիսում, «Մշակ» թերթի խմբագիր Համբարձում Առաքելյանի մախաձեռնությամբ «հօգուտ պատերազմից վնասվածների», Տերյանը տպագրել է հինգ բանաստեղծություն՝ «Մանուկներ ենք որբ» (հետագայում վերագրել է «Մենք բոլորս, բոլորս» (էջ 99), «Մանուկներ ենք մենք երկու խեղճ» (էջ 99), «Եթե սեր չըկա - ինչի՞ համար» (էջ 100), «Անգարդ իմ օրվան, անտուն իմ կյանքին» (էջ 100) եւ «Գնչու» (հետագայում վերագրել է «Նույնն է հասցեդ հնամյա» (էջ 100-101):

Թեւ «Մշուշի միջից,- տեսիլ դյուբական»-ը «Նվեր որբերին» թերթում տպագրվել է ուղարկվելուց ավելի քան 11, իսկ «Մշակում»՝ տպագրվելուց 6 ամիս հետո, բայց, մեր կարծիքով, այն ուշ տպագրվելու պատճառով ակամա դարձել է վերջին տարբերակ: Ոչ մի կասկած չի կարող լինել, որ հինգ ամիս առաջ՝ «Մշակ», իսկ վեց ամիս հետո «Նվեր որբերին» թերթերում տպագրված բանաստեղծությունն անցած 11 ամիսների ընթացքում Տերյանը, որ սերտ մամուլագրություն ուներ այդ ժամանակ Բաքվում ապրող իր մտերիմ ընկերների՝ Յուլակ Խանգադյանի եւ Դավիթ Անանունի հետ (դժբախտաբար նրանց այդ ամիսների ոչ բոլոր նամակներն են պահպանվել), թողներ տպագրվել նախնական բնագիրը:

Մեզ թվում է, թե «Մշակ» եւ «Նվեր որբերին» թերթերին ուղարկված բնագիրը նույնն է եղել, պարզապես «Նվեր որբերին» թերթի տպագրությունը ուշանալու պատճառով, բանաստեղծը հույսը կտրել էր նրանից եւ նույն բնագիրը հանձնել «Մշակին»: Ոչ մի կասկած չի կարող լինել, որ «Մշակում» տպագրվելուց հետո է Տերյանը հիմնովին փոխել ու վերամշակել վերջին տունը, այլապես, կրկնում եմ՝ նա չէր հանդուրժի, որ մշակված բանաստեղծության բնագիրը տպագրվելուց վեց ամիս հետո տպագրվեր նրա նախնական տարբերակը, որ «Նվեր որբերին» է ուղարկվել 11 ամիս առաջ:

Ավելացնենք նաեւ, որ 1915թ. դեկտեմբերի սկզբին Տերյանը Մոսկվայի Հայկական կոմիտեի նախագահ Ստեփան Մամիկոնյանի հանձնարարությամբ եղել է Կովկասում: Հայտնի է, որ Տերյանը Վանի հերոսամարտի մասին ուզում էր պոեմ գրել եւ հնարավորություն չունենալով անձամբ լինելու Վանում՝ ցանկանում էր այցելել հայկական որբանոցները եւ նյութեր հավաքել իր գրելիք պոեմի համար: Բանաստեղծը լինում է երեւանում: Այստեղ նա այցելում է Ցարսկայա փողոցի վրա գտնվող որբանոցը, ուր ապաստան էին գտել Վանից գաղթած երեխաներ: Նրա խնդրանքով երեխաները շարադրություններ են գրում իրենց կյանքի եւ Վանի պաշտպանության մասին: Այդ շարադրություններն այժմ պահվում են Եղիշե Չարենցի անվան գրականության եւ արվեստի թանգարանի Վահան Տերյանի ֆոնդում (գործ թիվ 45):

Եթե «Մշակի» տարբերակը լինել վերջնական բնագիրը, ապա Պետրոգրադի համեմատությամբ, ավելի մոտիկ գտնվելով Բաքվին, Տերյանը Թիֆլիսից ու երեւանից կարող էր որեւէ ձեւով կապ պահպա-

նել Բաքվի իր ընկերների հետ եւ կանխեր «Մշուշի միջից,- տեսիլ ղյութական» բանաստեղծության նախ-
նական բնագրի տպագրությունը:

«Մշակ» եւ «Նվեր որբերին» թերթերում տպագրված «Մշուշի միջից,- տեսիլ ղյութական» բանաս-
տեղծության վերջին (3-րդ) քառատողերի համեմատությունը մեզ բերում է այն համոզման, որ երկրորդը
շատ ավելի հաջողված է, քան առաջինը:

Բերենք այդ երկու թերթերի բնագրային տարբերությունները՝

«Մշակ» թերթում.

*Որտե՞ղ է խոցում այնպես չար ու խոր
Սիրտը մարդկային դաշույնը քինոտ.
Որտե՞ղ է հոգին այնպես վիրավոր,
Եվ անպարտ երկիրն այնպես արյունոտ...*

«Նվեր որբերին» թերթում.

*Որտե՞ղ է հոգին խոցված այնքան խոր,
Որտե՞ղ է դահիճն ավելի քինոտ,
Որտե՞ղ է երկունքն այնպես ահավոր
Եվ չքնաղ երկիրն այնպես արյունոտ...*

Հավանաբար Տերյանին չեն բավարարել առաջին տարբերակի վերջին տան «դաշույնը քինոտ» եւ
«Եվ անպարտ երկիրն այնպես արյունոտ...» արտահայտությունները, «քինոտ դաշույն» եւ «անպարտ եր-
կիր», բայց «այնպես արյունոտ», եւ պատահական չէ, որ փոխել ու դարձրել է «դահիճը քինոտ», իսկ վեր-
ջին տողը՝ «Եվ չքնաղ երկիրն այնպես արյունոտ...»: (Այս ե մյուս բոլոր ընդգծումները մերն են.- Յու. Հովհ.):
Հիշենք նաեւ, որ Տերյանի կենդանության ժամանակ ինչպես «Մշակ», այնպես էլ «Նվեր որբերին»
թերթերում 7-րդ տողը տպվել է «Որտե՞ղ է աղոթքն այնպես վեհապարզ» ձեւով, այնինչ հետմահու հրատա-
րակություններում՝ «Որտե՞ղ է աղոթքն այնպես վեհ ու պարզ» է: Մեզ թվում է՝ «վեհապարզ»-ը ոչ թե վրի-
պակ է, այլ՝ այն բազում նորաբանություններից մեկը, բայց եւ սակավաթիվներից, որից Տերյանը հրաժար-
վել է: Վրիպակ չի կարող լինել, քանի որ «Նվեր որբերին» թերթում տպագրված բնագիրը ոչ թե ար-
տատպվել է «Մշակ»-ից, որ մտածենք, թե վրիպակը մեխանիկորեն անցել է «Նվեր որբերին», այլ նոր ու
մշակված տարբերակ է եւ տպվել է մի նոր ու անտիպ բանաստեղծության հետ: Խոսքը վերաբերում է «Քեզ
կըմնա միշտ օտար» բանաստեղծությանը:

Ավելացնենք նաեւ, որ «Մշուշի միջից,- տեսիլ ղյութական» բանաստեղծությունը այն սակավաթիվ
երգերից է, որ Տերյանն իր կենդանության ժամանակ երկրորդ անգամ է տվել տպագրության:

Իսկ թե ինչու չի Տերյանը իր «Բանաստեղծություններ»-ի 2-րդ հատորը (ծեռագիր եւ կիսատ) կազ-
մելիս «Մշուշի միջից,- տեսիլ ղյութական» բանաստեղծության «Նվեր որբերին» թերթի բնագիրը դրել
«հատոր II Գ»-ում, որ «երկիր Նաիրի» շարքն է, ուր իր ծեռքով արտագրված է 14 բանաստեղծություն, այլ
դրել է «Մշակ»-ի բնագիրը, դժվար է ասել:

Սակայն մի բան պարզ է, որ «հատոր II Գ»-ում Տերյանի ծեռքով արտագրված «երկիր Նաիրի» շար-
քն ավարտված, լրացված ու վերջնական տեսքի բերված չի եղել: Այդ են վկայում մշակման նպատակով
մարբեր բանաստեղծություններում ավելացված մի շարք նոր բառեր ու տողեր, ուր տարբերակներից եւ
ոչ մեկը չի ջնջված՝ ընտրությունը թողնելով հետագային: Բայց հետագայում մի շարք հանգամանքներ (թո-
քերի հիվանդություն եւ այդ պատճառով՝ զինվորական ծառայությունից ազատվելու հոգսեր, երկարատե-
ւ բուժում Սուխումի առողջարանում, բազմազբաղ աշխատանք Ազգությունների գործերի ժողովրդական
կոմիսարիատին կից Հայկական գործերի կոմիսարիատում, հիվանդության-սաստկացում եւ անժամանակ
մահ) թույլ չտվին ավարտին հասցնելու ու բանաստեղծությունների 2-րդ հատորը կազմելու աշխատանք-
ները: Մինչդեռ կասկածից վեր է, որ ինչպես ամբողջ ժողովածուն, այնպես էլ «երկիր Նաիրի» շարքը պի-
տի ենթարկվեր թե՛ քանակական եւ թե՛ որակական փոփոխությունների:

Այս փաստերը մեկ անգամ եւս ցույց են տալիս, որ «Մշուշի միջից,- տեսիլ ղյութական» բանաստեղ-
ծության վերջնական բնագիրը, որ Տերյանի վերջին կամքն է, ոչ թե «Մշակ» թերթի բնագիրն է, որ հավա-
նաբար նախքան երկրորդ տպագրությունը, բանաստեղծի ծեռքով արտագրվել է «հատ. II Գ»-ում եւ դար-
ձել հետագա բոլոր հրատարակությունների համար հիմք, այլ՝ առաջին տպագրությունից 6 ամիս հետո
«Նվեր որբերին» թերթում տպագրված բնագիրը:

Կարծում ենք նոր հրատարակվելիք ժողովածուներում անպայման կշտկվի այս սխալը:
«Նվեր որբերին» թերթում Տերյանի «Մշուշի միջից,- տեսիլ ղյութական» բանաստեղծության
տպագրության փաստը հայտնի չի եղել գրականագետ Պողոս Մակինցյանին ու պրոֆ. Վաչե Պարտիզու-
նուն: Եթե Մակինցյանին հայտնի լիներ, իր կազմած Տերյանի երկերի ժողովածուի 3-րդ հատորում (Կ. Պո-
լիս, 1923, էջ 91) կբերեր «Նվեր որբերին» բնագիրը, իսկ ծանոթագրության մեջ էլ (էջ 288) կնշեր
տպագրության տեղը: Նույնը կաներ նաեւ Վաչե Պարտիզունին իր կազմած Տերյանի երկերի ժողովա-
ծուի 1-ին հատորում (Երեւան, 1972, էջ 244) եւ բանաստեղծության ծանոթագրության մեջ (էջ 355):
Այս բանաստեղծության՝ «Նվեր որբերին» թերթում տպագրելու մասին որեւէ ակնարկ չկա նաեւ Սա-

կինցյանի՝ Տերյանի մասին գրած հոդվածներում ու Վաչե Պարտիզունու տերյանագիտական ուսումնասի-
րություններում:

Որ պրոֆ. Վաչե Պարտիզունուն հայտնի չի եղել «Նվեր որբերին» թերթն ու նրանում Տերյանի «Մշու-
շի միջից,- տեսիլ ղյութական» բանաստեղծության տպագրության փաստը, դա մեկ անգամ եւս հաստատ-
վում է մեծ բանաստեղծի երկերի ժողովածուի 4-րդ հատորի (Երեւան, 1979)՝ Դավիթ Անանունին (թիվ 101)
եւ Յուլակ Խանգադյանին (թիվ 110) ուղղած նամակների տերյանագետի ծանոթագրություններով:

Այսպես, Տերյանը 1915 թ. հունվարի 7-ին Պետրոգրադից Դավիթ Անանունին ուղղած այդ նամակում
գրում է. «Ահա ուղարկում եմ Ձեր հիշած թերթի համար երկու ոտանավոր: Եթե հնարավոր կլինեն տպելու
համար՝ հատուկ կխնդրեի Ձեզ ուշադրություն դարձնել, որ վրիպակ չլինի, կամ գոնե այնպիսի վրիպակ, որ
աղավաղում է ոտանավորի միտքը: Կուզեի հոգված ուղարկել, բայց վախեցա, որ կուշանա - ժամանակը
կարճ է,- եւ ես հնար չունեմ ամբողջապես հոգվածին նվիրելու այդ ժամանակը» (նույն տեղում, էջ 177):

Վ. Պարտիզունին նամակի ծանոթագրության մեջ (էջ 412-413) գրում է. «1 Հնարավոր չեղավ պար-
զել, թե ինչ թերթի մասին է խոսքը: Ց. Խանգադյանին նույն տարվա մարտին հղած մի նամակում (N110)
Տերյանը գրել է. «Դավիթը գրել էր, որ մի թերթ պիտի հրատարակի Բաքու՝ հօգուտ գաղթականների՝ երկու
ոտանավոր զրկեցի. ի՞նչ է, չի՞ հրատարակվում»:

2 Հայտնի չէ, թե որ բանաստեղծություններն են դրանք»:

Հասկանալի պատճառով գրականագետը Տերյանի՝ Յուլակ Խանգադյանին գրած նամակից բերած
այս տողերն իր տեղում (էջ 416), որ ըստ հերթականության դարձել է 4-րդ կետ, ծանոթագրելիս կատարել
է այսպիսի հղում. «4 Տե՛ս թիվ 101 նամակի 1-ին ծանոթագրությունը»:

Մինչդեռ իրականում չպարզված թերթը «Նվեր որբերին»-ն է, իսկ երկու բանաստեղծությունները՝
նույն թերթում տպագրված «Մշուշի միջից,- տեսիլ ղյութական»-ն ու «Քեզ կըմնա միշտ օտար»-ը:

Դեռ ավելին, Ալ. Ծատուրյանի՝ 1914թ. դեկտեմբերի 29-ին Մոսկվայից Վահան Տերյանին ուղղած նա-
մակից պարզվում է, որ այդ թերթը, այսինքն՝ «Նվեր որբերին», լույս է տեսնելու 1915թ. հունվարի 6-ին,
բայց ինչպես հայտնի է, այն լույս է տեսել ավելի ուշ՝ նույն թվականի դեկտեմբերի 9-ին: Ահա այդ նամակը.

«Միրելի Վահան

Դավիթը նամակ է գրել, խնդրելու քեզ ուղարկել որեւէ բան հունվարի 6-ին հրատարակվելիք մի նոր
թերթի համար, հօգուտ թուրքահայ փախստականների: Նա քո հասցեդ չգիտե, ես էլ նոր իմացա, դրա հա-
մար ուշացավ նամակդ: Ուղարկելու դեպքում պիտի անհապաղ ուղարկել, որպեսզի հասնի: Այս մասին
պատիվ ունեմ հայտնել քեզ:

Դավթի հասցեն՝ Баку. Комитет Советов Съезда нефтяных рабочих (տե՛ս Գրական ժառանգություն,
գիրք առաջին, Երեւան, 1961, էջ 117-118):

...

Առիթից օգտվելով՝ ուզում ենք ճշտել նաեւ «Քեզ կըմնա միշտ օտար» բանաստեղծության առաջին
տպագրության տեղն ու տարբերվել: Տերյանի «Երկերի ժողովածու»-ի առաջին հատորի (Երեւան, 1972, էջ
355) ծանոթագրության մեջ ասված է. «Առաջին անգամ տպագրվել է «Երկերի ժողովածու»-ի 3-րդ հատո-
րում (էջ 99)»: Խոսքը Պողոս Մակինցյանի կազմած Վահան Տերյանի «Երկերի ժողովածու»-ի 3-րդ հատո-
րի (Կ. Պոլիս, 1923) մասին է: Մինչդեռ, ինչպես արդեն ասել ենք, այն առաջին անգամ տպագրվել է 1915
թվականի դեկտեմբերի 9-ին «Նվեր որբերին» թերթում:

Այս բանաստեղծության «Նվեր որբերին» թերթում տպագրվելու փաստը նույնպես, հասկանալի
պատճառով, հայտնի չի եղել ոչ Պողոս Մակինցյանին եւ ոչ էլ պրոֆ. Վաչե Պարտիզունուն: Եթե Մակին-
ցյանին հայտնի լիներ, ապա իր կազմած Տերյանի «Երկերի ժողովածու»-ի 3-րդ հատորում «Քեզ կըմնա
միշտ օտար»-ը չէր թողնի առանց ծանոթագրության, այլ շատ ուրիշ բանաստեղծությունների նման կծանո-
թագրեր եւ կնշեր առաջին տպագրության տեղը՝ «Նվեր որբերին» միօրյա թերթ, 1915 թիվ 1 (9 դեկտեմբե-
րի)»:

Իսկ պրոֆ. Վաչե Պարտիզունին, իբրեւ առաջին տպագրության տեղ, չէր նշի Պողոս Մակինցյանի
կազմած Տերյանի «Երկերի ժողովածու»-ի 3-րդ հատորը (էջ 99): Դեռ ավելին, Վաչե Պարտիզունին իր «Վա-
հան Տերյանի հետ» գրքում (էջ 227) կարծում է, թե այս, ինչպես նաեւ «Այստեղ է լացել իմ մայրը» եւ «Վե-
ջնալավ Իվանովին» բանաստեղծությունները «պոետի կենդանության օրոք չեն տպագրվել. ասել է, թե՛
աւտրաստ-ավարտված չեն եղել»: Մինչդեռ պարզվում է, որ դա այդպես չէ, որ սրանցից մեկը՝ «Քեզ
կըմնա միշտ օտար»-ը, միանգամայն «պատրաստ-ավարտված» է եղել եւ տպագրվել է «պոետի կենդա-
նության օրոք»:

Ю. Г. Оганесян - По следам стихотворений Ваана Терьяна - Стихотворение В. Терьяна "Из
тумана - видение прекрасное" в печати появилось в двух вариантах: первый - 7 июня 1915г. в "Мшаке", а второй -
9 декабря 1915г. в однодневной газете "Подарок сиротам". Нам кажется, что последним вариантом, т.е. последней
волей поэта надо считать не мшацкое, а именно второе издание. В статье также уточняется место и время первого
издания стихотворения "Тебя вечно будет чуждой...". Это стихотворение впервые напечаталось не в третьем томе
«Собрания сочинений В. Терьяна» (Константинополь, 1923г., стр. 99), как считали П. Макинцян и В. Партизун, а
в упомянутой однодневной газете "Подарок сиротам" от 9 декабря 1915 года.